

## Տ. ԱՐՄԱՇ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ծնվել է 1973 թ. հունվարի 29-ին Սիրիայի Հալեպ քաղաքում:

Նախնական կրթությունը ստացել է Հալեպի Ազգային Կիլիկյան վարժարանում:

1987 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1991 թ. սեպտեմբերի 15-ին՝ Խաչվերացի տոնին, ձեռամբ Գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1993 թ. ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը՝ պաշտպանելով «Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի (1911-1930) կյանքն ու գործունեությունը» թեմայով ավարտաճառը:

1993 թ. դեկտեմբերին, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Բեգչյանի հրավերով և Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի բարձր տնօրինությամբ, մեկնել է Գերմանիա՝ ուսման և եկեղեցական ծառայության:

1995 թվականից հովվական ծառայությանը զուգընթաց սովորել է նախ Նյուրնբերգ-Էրլանկեն համալսարանի ավետարանական աստվածաբանության ֆակուլտետում, ապա 2000 թվականից՝ Տյուբինգենի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում:

1998 թ. նոյեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի բարձր տնօրինությամբ և ձեռամբ Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Բեգչյանի, Քյոլն քաղաքում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Տ. Արմաշ աբեղա:

1998 թ. ի վեր ծառայում է գերմանահայոց թեմում որպես հոգևոր հովիվ հարավային Գերմանիայի հայ համայնքների (Գյոփինգեն, Շտուտգարտ, Քեհլ, Նյուրնբերգ և Մյունխեն քաղաքներ):

Այժմ ծառայում է Գերմանիայի Գյոփինգեն քաղաքում՝ որպես հոգևոր հովիվ տեղի հայկական Սուրբ Խաչ եկեղեցու և Գյոփինգեն, Շտուտգարտ, Քեհլ, Նյուրնբերգ և Մյունխեն քաղաքների հայ համայնքների:

2003 թ. դեկտեմբերի 23-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Աբասի որդի Գրիգոր վրդ. Սանահնեցու «Գիրք պատճառացը» թեմայով: